

ԸՄԻ «ՊԱՏԱՍԽԱՆԻ» ԱՌԻԺԻՎ

Խաչատուր Աբովյանը և, Հազարյանին 1835-ի հունվարի 1-ին մի նամակ է գրել, Այդ նամակն ունի շորս ինքնագիր. երեքը գտնվում են Աբովյանի արխիվում, չորրորդը՝ Լենինգրադի մարզային պետական արխիվում:

Այդ հետաքրքիր փաստաթղթի դտնելու և հրապարակելու հետ կապված է մի պարզ պատմություն:

Հիմնվելով Երևանյան ինքնագրերից մեկի վրա, պրոֆ. Ռ. Զարյանը այդ նամակի մասին խոսում է իր «Նոր տվյալներ Աբովյանի կյանքից» ուսումնասիրության մեջ, որը լույս է տեսել 1948-ին:

Նամակի Երևանյան ինքնագիրը հրապարակվել է Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի 10-րդ հատորում: Հատորը լույս է տեսել 1961-ին: Տեքստը տպագրության է պատրաստել րանասեր Լ. Կարապետյանը:

Այնուհետև, ՀՍՍՀ պետական կենտրոնական արխիվի գիտական աշխատակից Ա. Սարգսյանը Լենինգրադի մարզային պետարխիվում հանդիպելով այդ նամակի մի այլ ինքնագրի՝ հրապարակել է «Ժմֆորմացիոն բյուլետենի» 1961-ի 2-րդ համարում:

Այս ամենից հետո Աբովյանով երկար տարիներ զբաղվող Պիոն Հակոբյանը «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում (1963, № 1) հրապարակելով Ստեփանոս Ներսիսյանի նամակները, 184-րդ էջի մի ծանոթագրության մեջ նշել է, որ Ա. Սարգսյանը հրապարակել է նամակը որպես անտիպ, երբ դա անտիպ չէ, չի հիշատակում Երևանյան օրինակները, չի հիշատակում, թե ով է դրա մասին առաջին անգամ զրականության մեջ խոսել, սխալ է հասցեագրել և միաժամանակ գրել է, որ հրատարակելիս, բացի փաստագրական անտեղյակությունից հանգես է բերել տեքստարանական անփութություն:

Ահա այստեղից էլ սկսվել է «մի կաթիլ մեղրի» պատմությունը:

Պ. Հակոբյանին պատասխանեց Ա. Սարգսյանը, վերջինիս էլ առաջինը, Իսկ «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրի 1966 թ. 2-րդ համարում էլ այդ առթիվ տպագրվել է անստորագիր մի հոդված «Պատասխան Պիոն Հակոբյանին» վերնագրով:

Ինչո՞ւմ է խնդիրը:

Ա. Սարգսյանը անգգուշություն է ունեցել կարծելու, որ իր գտած նամակը Լենինգրադի արխիվից՝ որպես այդպիսին միակն է, նա չի մտահոգվել աչքի անցկացնել Աբովյանի շուրջ եղած զրականությունը պարզելու համար, թե դա իսկապես նորություն է, թե ոչ, եթե լավ ծանոթ լինեք մասնագիտական զրականությանը, ապա կտեսնեք, որ ինքը հրապարակում է զրականության մեջ արդեն շրջանառության առնված փաստաթղթի մի այլ ինքնագիրը: Բարեխղճություն հանգես բերելու դեպքում, նա պետք է հետաքրքրվեք նաև այն բանով, թե իր իմացած նամակը չկա՞, արդյոք, Աբովյանի Երևանյան արխիվում: Եվ եթե այդ մասին իրեն դիտողություն է անում Աբովյանով զբաղվող բանասերը, տվյալ դեպքում Պիոն Հակոբյանը, ոչ մի զարմանալու բան չկա: Եվ այն հանգամանքը, թե ինչո՞ւ է նա այդ ուշացումով անում, ոչ մի նշանակություն չունի:

Հավ է այն, որ Ա. Սարգսյանը շնորհակալություն է հայտնում Հակոբյանին հասցեատիրոջ անունը ճշգրտելու համար:

Հավ է, որ ինքը բաժանում է Պ. Հակոբյանի դայրույթը փաստաթուղթը ազավազված վիճակում հրապարակված լինելու համար:

Նա ասում է, որ ինքը տեղյակ է եղել Երևանյան ինքնագրին: Այդ դեպքում հարց է ծագում ինչո՞ւ այդ մասին չի հիշատակել հրապարակված նամակի ներածականում: Ա. Սարգսյանը, ինչպես նաև «Բանբերի» հոդվածի անհայտ հեղինակը կշտամբում են Պ. Հակոբյանին, որ լինելով Աբովյանի 10-րդ հատորը տպագրության պատրաստողը, չի հիշատակել նամակի Լենինգրադյան օրինակի մասին: Ա. Սարգսյանի աչքից վրիպել է 10-րդ հատորի 4-րդ էջում գրվածը՝ «հայերեն

նամակները պատրաստեց և ծանոթագրեց է. Կարապետյանն ու նույնը ասված է նաև ինստիտուտի կողմից (էջ 5)։ Չե՞ս հասկանում, այդ դեպքում ինչու պատասխանատվությունը դնել Պ. Հակոբյանի վրա։

Ա. Սարգսյանը արդարանալու համար ասում է, թե ինքը նախընտրությունը տալիս է լենինգրադյան օրինակին, որովհետև դա ավելի մշակված է ու հղկված, և դրա համար էլ անհրաժեշտ է համարել հրատարակել։ Եվ լավ է արել։ Բայց հրատարակելուց առաջ հարկավոր էր ավելի խորանալ նյութի ուսումնասիրության մեջ, թեկուզ այնքան, որքան նա այդ արել է տվյալ հարցի շուրջը երկրորդ անգամ հանդես գալու պահին։

Անտարակույս, Ա. Սարգսյանը ավելի ճիշտ վարված կլիներ, եթե լենինգրադյան օրինակը տպագրության հանձնելիս երևանյանի բաղդատություններ այդ աներ, ցույց տալով նրա, որպես մաքրագրի առավելությունները և այն տարբերությունները, որ կան։ Նա այդ արել է, բայց, Պիոն Հակոբյանի դիտողությունից հետո։ Մինչդեռ սկզբից պետք է արած լիներ։ Ուրեմն ի՞նչ է ստացվում. եթե չլիներ Պ. Հակոբյանի երկտողը, չէին լինի նաև Ա. Սարգսյանի լրացուցիչ պրպտումները, ինչպես նաև իր իսկ հրապարակած, բայց աղավաղված տեքստը մշտնջենով փոխարինելու անհրաժեշտությունը (թեև, մշտնջենով մեջ էլ բավականաչափ սխալներ են տեղ գտել)։

Ուրեմն օգնե՞ց Հակոբյանի քննադատությունը, բնեցած՝ այն իր դրական հետևանքը։ Դա ամեն մի կասկածից վեր է։ Մանավանդ, որ «Բանբերի» հոդվածի անհայտ հեղինակը նույնպես ընդունում է Պիոն Հակոբյանի դիտողությունների մեծ մասը։ Այդ դեպքում ի՞նչ կարիք կար այդպիսի խոստանո՞ւ պատասխան գրելու, ինչպես այդ արել է «Բանբերի» հոդվածի հեղինակը։ Կարո՞ւմ ես և մնում դարձացած։ Հակոբյանի բոլոր էությունը արված բոլոր դիտողությունները նա ընդունում է և... այնուամենայնիվ առարկում։ Ըստ որում պետք է նկատել, որ Հակոբյանի քննադատական դիտողություններն անհայտ հոդվածագիրն ընդունում է ի միջի այլոց, այնպես, խոսքի արանքում, իսկ սեփական առարկություններին հաղորդում է շեշտակի բնույթ։

Ինչի՞ շուրջն է «Բանբերի» անհայտ հեղինակի առարկությունը։ Նա ասում է, թե Սարգսյանը իրավունք ունի իր գրածը հրապարակելու։ Ծիշտ է։ Իրավունք ունի, բայց այդ մասին չէ Պ. Հակոբյանի խոսքը։ Վերջինս ոչ թե դեմ է, որ Սարգսյանը հրապարակել է, այլ վրդովված է, որ հրապարակվածը ներկայացվում է որպես նորություն, որպես անհայտ նյութ այն դեպքում, երբ դա գրականության մեջ արդեն հայտնի փաստաթղթի մի այլ, թեկուզ մաքրագիր, արինակն է։ Նա խոսում է, ինչպես նրա հոդվածի վերնագիրն է ցույց տալիս, գիտական էթիկայի անտեսման մասին։ Եվ կարիք կա՞ր, արդյոք, որ «պատասխանի» հեղինակն աշխատեր այնպիսի տպավորություն ստեղծել, թե էականը ոչ թե Հակոբյանի դիտողություններն են, այլ այն ձևը, որի մեջ դրված են դրանք։

Անհայտ հեղինակը անճշտություններ է թույլ տալիս «Բանբերի» իր «Պատասխան»-ում։ Նրա հոդվածում ասված է. «Մեզ անհասկանալի է մնում նաև այն, թե ինչ ապացույցներ է ունեցել Պիոն Հակոբյանը, երբ վերևում հիշատակված տողատակի իր ծանոթագրությունում գրել է, թե իբրև Ա. Սարգսյանը «Իմֆորմացիոն բյուրոյանում» հրատարակված մեծ լուսավորչի նամակի տեքստը վերատպել է Արովյանի երկերի լիակատար ժողովածուի 10-րդ հատորից»։

Այժմ կարվանք թե ինչ է դրված Պ. Հակոբյանի տողատակի ծանոթագրությունում։

«Ա. Սարգսյանը նույն նամակը իբրև «անտիպ» բաղմաթիվ սխալներով վերատպել է ՀՍՍՀ Արխիվային վարչության բյուրոյանում բոլոր լենինգրադյան ձեռագրի...»։

Սրանք տարբեր բաներ են։

Նամակը նույնն է. ինքնագրերը տարբեր, մեկը երևանյան, մյուսը՝ լենինգրադյան։ Նամակն իսկապես տպագրված է։ Տպագրված չէ այդ նույն նամակի մի այլ ինքնագիրը, որը տարբերություններ ունի։ Բայց այն մասին, որ իբրև Հակոբյանն ասում է, թե դա վերցված է 10-րդ հատորից՝ այդպիսի բան չի ասված Հակոբյանի մոտ։ Զե՞ որ Հակոբյանը շատ պարզ ասում է «Ըստ լենինգրադյան ձեռագրի»։

Սակայն, հոդվածի անհայտ հեղինակը որպեսզի տպավորություն ստեղծի նույնիսկ իրավաբանական կադի եղրակացություններ է կատարում։

«...Ա. Սարգսյանը պարզապես ամբաստանվում է առնվազն զայրացուցիչ անազնվորյան մեջ» (ընդգծումը խմբագրությանն է)։

Կամ՝

«...«Որպիսի» հիմունքով է Պիոն Հակոբյանը իր ընդդիմախոսին մեղադրում վերատպության (ընդգծումը խմբագրությանն է), այլ խոսքով՝ խաբուխության (ընդգծումը խմբագրությանն է) մեջ»։



Ինչո՞ւ է «Բանբերի» անհայտ հեղինակը վերագրում ինքնահնար մեղադրանքներ Հակոբյանին, որոնք նա չի արել, և, ապա, դրանից բխող սուր, անհարկի որակումներ տալիս:

Կա՞ր, արդյոք, դրա կարիքը: Ո՛չ, չկար:

Ամենից զարմանալին այն է, որ իր «Պատասխանի» այս հատվածը ավարտում է հարց տալով՝ «Բանավիճելու սա ի՞նչ եղանակ է», և դրանից անմիջապես հետո Հակոբյանի հասցեին բաց թողնում վիրավորական արտահայտությունների մի ամբողջ շարան («հավակնոտ քննադատություն», «Արովյանագիտության միակ ու անսխալ մեկնարանն ու չեղադատողը մեզանում ինքն է որ կա», «անհամեստությունը երբեք լավ ուղեկից չի եղել և ոչ մի գիտնականի համար», «անհամեստ հավակնություններ», «մոռոպոլիստական ձգտումներ» և այլն):

Վատ չէր լինի իր իսկ ձևով հարց տալ «Պատասխանի» անհայտ հեղինակին.

«Բանավիճելու սա ի՞նչ եղանակ է»:

Վերջացնենք:

Մշակույթի նշանավոր գործիչների նամակները պատմական վավերագրեր են, որոնց մեջ արտացոլվում են ժամանակի հասարակական, գիտական, գրական հարցերը և ստեղծագործողների անձնական շահագրգռությունները: Ուսումնասիրողները պարտավոր են այդ նամակները հավաքել ու հրատարակել ամենայն լրջությամբ, բարեխղճությամբ և բժախնդրությամբ: Դա պարտադիր է ոչ միայն Պ. Հակոբյանի, այլև Ա. Սարգսյանի համար: Հուսանք, որ սրանով վերջ կտրվի այդ առանց այն էլ ձգձգված վեճին: